9737 2. 04. 09.

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«04» 09 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 217 - 25

Նախաձեռնողը՝ ***«Հալդի Քոնսալթ» ՍՊԸ***
Գեղարքունիքի մարզ, Նորատուս բնակավայր

Գործունեությունը՝ ***Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրում դպրոցի կառուցում***
Կոտայքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 217 - 25

« 04 » 09 2025թ.

Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրում դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Հալդի Քոնսալթ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, Մայակովսկի բնակավայր

Ներածական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրում:

Հողի նպատակային նշանակությունը բնակավայրի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործման:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8 -րդ կետի ա. ենթակետի:

Նկարագրական մաս. Նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել 07-043-0025-0015 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N02062021-07-0083 վկայականը:

Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրում դպրոցի կառուցապատման համար հատկացվելու է 14400 մ² մակերեսով տարածք: Կառուցապատման մակերեսը կազմում է 3475 մ² : Բարեկարգման մակերեսը՝ 10925 մ², որից կանաչապատման մակերեսը՝ 4916,5 մ²:

Նախատեսվում է գոյություն ունեցող դպրոցի տարածքում կառուցել երկհարկանի, 595.6 մ² մակերեսով, նկուղային հարկով դպրոց, որը կունենա բացօթյա մարզադաշտ, վազքուղի, ներքին բակ: Տարածքը կառուցապատված տարածք է, առկա է ըստ վկայականի 2989.35 մ² դպրոցի շենքը, ենթակայանն ու երկու կաթսայատունը:

Շինարարությունն իրականացվելու է երկու փուլով,

Նոր կառուցվող դպրոցը նախատեսվում է հողամասի երկարությամբ՝ փողոցին զուգահեռ: Դպրոցն կունենա 35 մ x 91.5 մ առանցքային չափեր և սեյսմիկ կարով բաժանված կլինի 2

հավասար մասնաշենքերի: Միջանցքների առանցքային չափը կկազմի 3,5 մ՝ որոշ տեղամասերի լայնացումներով: Դասասենյակները կունենան 7 մ x 7 մ առանցքային չափսեր, իսկ դրանց մակերեսը միջինում կկազմի 48 մ^2: Առաջին հարկի բարձրությունը կազմելու է 3.3մ: Երկրորդ հարկի բարձրությունը կլինի փոփոխական՝ ստորին մասում 3.0 մ: Սպորտային դահլիճի բարձրությունը կազմելու է 7.8 մ, իսկ հանդիսությունների դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ 4.5 մ:

Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել բազալտե երեսապատման սալիկներով և տրավերտինով: Պատուհանները նախատեսված են ալյումինե: Աստիճանները՝ երեսապատվելու են բազալտե սալիկներով, հատակը մետլախային խեցեսալիկներով և վինիլներով:

Տանիքին նախատեսվում է տեղադրել 127.6 կՎտ պիկային հզորությամբ արևային մարտկոցներ: Դպրոցը նախատեսվում է համալրել կաթսայատնով:

Առաջին հարկի մակերեսը կազմելու է մոտ 3200 մ^2: Հարկում տեղակայված կլինեն դասասենյակները, գրադարանը, համակարգչային տեխնիկայի, աշխատանքի ուսուցման դասասենյակները, ուսուցչանոցը, աշխատասենյակները, բժշկի սենյակը, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների սենյակը, սպորտդահլիճն իրեն կից հանդերձարաններով և մարզիչի սենյակով, ճաշարանն ու խոհանոցը, ինչպես նաև 3 սանհանգույց և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Նախատեսված է նաև սանհանգույց և վերելակ հաշմանդամների համար: Երկրորդ հարկի մակերեսը կազմելու է մոտ 2560 մ^2:

Հարկում տեղակայված կլինեն 6-ից մինչև 12-րդ դասարանների դասասենյակները, աշխատասենյակներ, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների, մեթոդ միավորման, ռազմագիտության դասասենյակներ, ուսուցչանոց, կենսաբանության, քիմիայի, ֆիզիկայի դասասենյակները կից լաբորատորիաներով և լաբարանտական սենյակներով, հանդիսությունների դահլիճն իրեն սպասարկող սենյակներով, չորս սանհանգույց և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ:

Դպրոցը նախատեսված է 432 աշակերտների համար:

Շենքն ապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով, հրշեջ-փրկարարական մեքենաների մոտեցման ուղիներով: Շահագործման փուլում շենքն ապահովված է լինելու նաև բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով:

Նախատեսված են ավտոմատացված ջրային երկու կաթսաներ՝ համալրված ավտոմատացված գազի այրիչներով, 650 կՎտ նոմինալ ջերմարտադրողականութուններով:

Գազամատակարարումն իրականացվելու է տեխնիկական պայմանի համաձայն:

Էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի՝ մոտակա էլեկտրական ենթակայանից:

Շինարարության փուլում նախատեսվում է ժամանակավոր ջրագծի անցկացում: Շինարարության համար ջուրը բերվելու է գործող դպրոցից:

Շինարարության փուլում աշխատողների կենցաղային կարիքների հոգալու նպատակով տեղադրվելու է բիոզուգարան՝ լվացարանով: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 5

տ տարողության բաքի մեջ:

Շահագործման փուլում դպրոցի ջրամատակարարման համակարգը միացվելու է բնակավայրի ջրատարին: Կենցաղային հոսքերը ինքնահոս խողովակներով հեռացվելու են արտաքին ցանց և համաձայն տեխնիկական պայմանի թափվելու են կոյուղի:

Կենցաղային կոյուղու ցանցը նախատեսված է համակցված: Շինության վերգետնյա հատվածի կոյուղին ինքնահոս հեռանալու է բակային ցանց, իսկ նկուղային հարկում նախատեսված սանհագույցների կոյուղին բակային ցանցին է միանալու կոյուղու ճնշումային սարքավորման օգնությամբ:

Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների դեպքում նկուղային հարկը ծառայելու է որպես թաքստոց: Նկուղն ապահովված է լինելու հակահրդեհային ավտոմատ համակարգով, սանհանգույցով, լվացարանով, վթարային ելքով:

Դպրոցի մասնաշենքերը կառուցելուց հետո տարածքը ցանկապատվելու է 1,40 մ բարձրությամբ ճաղաշարով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի բարեկարգում և կանաչապատում՝ 4916,5 մ^2 մակերեսով: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ: Բարեկարգումը կատարվելու է սալիկներով, սալվածքների, թեքահարթակների, եզրաքարերի տեղադրմամբ:

Ընդհանուր հողային հանույթի ծավալը նախատեսվում է 11000 մ^3, որից 2770 մ^3 ծավալով հանույթն օգտագործվելու է հիմքերի հետլիցքի նպատակով, 668 մ^3 ծավալով հանույթը կկազմի բուսահողը, իսկ նմացած 7562 մ^3 ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի համայնքի կողմից համաձայնեցված աղբավայր:

Կենցաղային աղբը կառուցապատման փուլում նախատեսվում է, 9468 կգ/տարի, ինչի կուտակման համար տեղադրվելու է 2 աղբարկղ: Շինարարական աղբը հեռացվելու է 14 կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր:

Քանդման արդյունքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ մոտ 4400 մ^3 շինաղբի տեսքով, որը հեռացվելու է համայնքապետարանի կողմից հատկացված տարածք:

Արտադրական և անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 0,84 մ^3 չափսերով պարզարան, որտեղ մեխանիկական նստեցումից հետո պարզեցված ջուրը օգտագործվելու է շինարարական աշխատանքների ժամանակ արտադրական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը հեռացվելու է որպես շինաղբ: Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր մետաղաթիթեղով:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-շինհրապարակը ցանկապատվելու է, կառուցվող շենքը ծածկվելու է համապատասխան բարձրության ցանցով՝ փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով,

-բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը,

-շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականցվելու է փակ ծածկով մեքենաներով,

- իրականացվելու է շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ,

- սորուն նյութերի պահեստները ծածկվելու են համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը,
-աշխատանքների ավարտից հետո մաքրվելու են բոլոր տարածքները և առաջացած թափոնները տեղափոխվելու են տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
-օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ.
- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, շինարարության փուլում ամենօրյա հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցան օդի դրական ջերմաստիճանի դեպքում՝ պարբերաբար,
- ջրային և հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և կեղտաջրերի ներթափանցման բացառելուն ուղղված միջոցառումներ, տեսողական դիտարկումներ, մասնագետի կողմից ստուգայցեր,
-արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության մշտադիտարկումներ ամսական մեկ անգամ,
-շինտեխնիկայի և տրանսպորտային միջոցների դիտողական ստուգումներ շինարարական աշխատանքների կատարման ընթացքում պարբերաբար,
-Տարածքի կանաչապատման աշխատանքների և կանաչապատման ծրագրի համապատասխանության ուսումնասիրություն, կանաչ զանգվածի վիճակի՝ կպչողականության ուսումնասիրություն և ծառերի աճն ապահովվելու նպատակով մշտադիտարկում, շինարարական աշխատանքների ավարտից հետո:
Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացման համար նախատեսվում է տարեկան մասնահանել 400 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Կոտայքի մարզի, Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրում դպրոցի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային լսումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախագծով նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն ինչպես նաև Կոտայքի մարզպետարանն ու Աբովյանի համայնքապետարանը:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հաշվետվությունում ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
3. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Աբովյանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
5. Կառուցապատման աշխատանքների ժամանակ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
6. Պարսպապատել շինարարական հրապարակները իսկ ապամոնտաժվող շենքերն ու շինությունները՝ ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով: Թափոնների տեղադրումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Աբովյանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրում դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական
կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան